

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

### **Եվրասիական տնտեսական միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, Բելառուսի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության ազգային բանկը, Ղազախստանի Հանրապետության կառավարությունը և Ղազախստանի Հանրապետության ֆինանսական շուկայի կարգավորման և զարգացման հարցերով գործակալությունը, Ղրղզական Հանրապետության նախարարների կաբինետը և Ղրղզական Հանրապետության ազգային բանկը, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով,

նպատակ ունենալով ֆինանսական շուկաներում պայմաններ ստեղծել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման, ինչպես նաև վարկային ռիսկերի նվազեցման համար,

ծգտելով ապահովել ֆինանսական ծառայությունների սպառողների և մատակարարների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,

ընդունելով վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգը սահմանելու և ֆինանսական շուկաների ոլորտում ինտեգրացիոն գործընթացների խորացման նպատակով տվյալ տեղեկատվությունն օգտագործելու և Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) շրջանակներում ընդհանուր ֆինանսական շուկա ձևավորելու անհրաժեշտությունը,

որպես համարժեք և համապատասխան ճանաչելով տեղեկատվության պաշտպանության՝ Կողմերի կողմից կիրառվող մոտեցումները և մակարդակը, համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը՝

**նույնականացման տվյալներ՝** Միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված տեղեկություններ, որոնք թույլ են տալիս նույնականացնել վարկային պատմության սուբյեկտին և (կամ) վարկային պատմության օգտատիրոջը.

**վարկային պատմության ձևավորման աղբյուր՝** անձ, որը, Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տրամադրում է վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկություններ.

**վարկային պատմություն՝** վարկային պատմության սուբյեկտի և նրա պարտավորությունների մասին տեղեկություններ, որոնց կազմը սահմանվում է Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

**վարկային հարաբերություններ՝** հարաբերություններ, որոնց շրջանակներում Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վարկային պատմության ձևավորման աղբյուրի նկատմամբ առաջանում են վարկային պատմության սուբյեկտի պարտավորությունները.

**վարկային հաշվետվություն՝** Միության անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փաստաթուղթ, որը պարունակում է վարկային պատմությունների կազմի մեջ մտնող այն տեղեկությունները, որոնց անդրսահմանային փոխանակումն արգելված չէ Միության անդամ պետության օրենսդրությամբ.

**վարկային պատմության օգտատեր՝** Միության անդամ պետության

տարածքում գրանցված կազմակերպություն (իրավաբանական անձ), որը ստացել է վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը՝ վարկային հարաբերությունների ձևակերպման և (կամ) ձևակերպված վարկային հարաբերությունների դիտանցման նպատակով.

**վարկային պատմության սուբյեկտի համաձայնություն՝** վարկային պատմության սուբյեկտի թույլտվությունը՝ վարկային պատմության օգտատիրոջը վարկային հաշվետվություն տրամադրելու համար.

**վարկային պատմության սուբյեկտ՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի առնչությամբ ձևավորվում է վարկային պատմություն կամ ուղարկվել է վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցում.

**լիազորված կազմակերպություն՝** իրավաբանական անձ, որն իրականացնում է վարկային պատմությունների հավաքում, մշակում, պահպանում և վարկային հաշվետվությունների տրամադրում՝ Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

**լիազորված մարմին՝** Միության անդամ պետության մարմին, որը, այդ պետության օրենսդրությանը համապատասխան, ունի լիազորված կազմակերպությունների գործունեության նորմատիվ իրավական կարգավորում և (կամ) դրանց գործունեության նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնելու լիազորություններ:

## Հոդված 2

Սույն համաձայնագրով սահմանվում է Միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների և սույն համաձայնագրով նախատեսված այլ տեղեկատվության փոխանակման (այսուհետ՝ անդրսահմանային փոխանակում) կարգը:

### Հոդված 3

1. Անդրսահմանային փոխանակումն իրականացվում է լիազորված կազմակերպությունների փոխգործակցության միջոցով՝ դրանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով: Այդ պայմանագրերի նախագծերը ենթակա են համաձայնեցման լիազորված մարմնի կողմից, եթե դա նախատեսված է Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) օրենսդրությամբ:

Անդրսահմանային փոխանակման ժամանակ օգտագործվող ստանդարտներին, տեխնիկական արձանագրություններին, նորմատիվ-տեղեկատու տեղեկատվությանը, փոխանցվող տվյալների ձևաչափերին և կառուցվածքներին ներկայացվող՝ այդ պայմանագրերում ներառվող պահանջները մշակվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից՝ լիազորված մարմինների հետ համատեղ, ու հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից:

2. «Լիազորված կազմակերպություններ» ասելով հասկացվում է՝

Հայաստանի Հանրապետության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վարկային բյուրոյի գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք.

Բելառուսի Հանրապետության համար՝ Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան լիազորված կազմակերպությունների գործառույթներ իրականացնող իրավաբանական անձինք.

Ղազախստանի Հանրապետության համար՝ Ղազախստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վարկային պատմությունների ձևավորումը և վարկային հաշվետվությունների տրամադրումն իրականացնող կազմակերպություններ.

Ղրղզական Հանրապետության համար՝ «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում՝ Ղրղզական Հանրապետության լիազորված

մարմնի պաշտոնական կայքում տեղադրված՝ վարկային բյուրոների ռեեստրում ներառված իրավաբանական անձինք.

Ռուսաստանի Դաշնության համար՝ «Ինտերնետ» տեղեկատվական հեռահաղորդակցական ցանցում՝ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմնի պաշտոնական կայքում տեղադրված՝ վարկային պատմությունների բյուրոների պետական ռեեստրում ներառված իրավաբանական անձինք:

3. Անդրսահմանային փոխանակումը կազմակերպելու նպատակով լիազորված մարմիններն անդրսահմանային փոխանակմանը մասնակցող լիազորված կազմակերպությունների մասին պաշտոնապես տեղեկացնում են միմյանց և Հանձնաժողովին՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 օրացուցային օրվանից ոչ ուշ:

Լիազորված կազմակերպությունների փոփոխման դեպքում լիազորված մարմիններն այդ փոփոխությունների մասին պաշտոնապես տեղեկացնում են միմյանց և Հանձնաժողովին՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 10 օրացուցային օրվանից ոչ ուշ:

4. Հանձնաժողովը սույն հոդվածի 3-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալու օրվանից հետո՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, ապահովում է դրա տեղադրումը Միության պաշտոնական կայքում:

5. Սույն հոդվածի 1-ին կետում նշված պայմանագրերը պետք է պարունակեն անդրսահմանային փոխանակում իրականացնելու հետևյալ պայմանները՝

1) լիազորված կազմակերպությունների տեղեկատվական փոխգործակցության կանոններն ու կանոնակարգերը.

2) այն լեզուն, որով ձևավորվում և փոխանցվում է տեղեկատվությունը.

3) էլեկտրոնային փաստաթղթերի և տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

4) նույնականացման տվյալների ցանկը (կազմը).

5) վեճերի կարգավորման կարգը, այդ թվում՝ վարկային պատմության սուբյեկտի կողմից վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների վիճարկման կարգը.

6) տեղեկատվություն տրամադրելու ֆինանսական պայմանները.

7) տեղեկատվության պաշտպանության կազմակերպատեխնիկական ապահովմանը ներկայացվող պահանջները.

8) անդրսահմանային փոխանակում իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

#### Հոդված 4

1. Տեղեկությունները և այլ տեղեկատվությունը, որոնց մասով իրականացվում է անդրսահմանային փոխանակում, ներառում են՝

1) վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցումը.

2) վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը կամ այդ համաձայնության առկայության մասին տեղեկատվությունն այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի լիազորված կազմակերպություն է ուղարկվում վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցումը.

3) վարկային հաշվետվությունը.

4) վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների վիճարկմանն առնչվող փաստաթղթերը:

2. Վարկային պատմության օգտատերերի ցանկը ձևավորվում է լիազորված մարմինների առաջարկների հիման վրա և հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

3. Սույն համաձայնագրի իրագործման նպատակով վարկային հաշվետվությունը տրամադրվում է վարկային պատմության օգտատիրոջ հարցման հիման վրա և ներառում է, այդ թվում, վարկային պատմության սուբյեկտի նույնականացման տվյալները և նրա պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները:

4. Մեկ անդամ պետության վարկային պատմության սուբյեկտի՝ մյուս անդամ պետության վարկային պատմության օգտատիրոջը դիմելու դեպքում նշված օգտատերն իրավունք ունի ստանալու վարկային պատմության սուբյեկտի վերաբերյալ վարկային հաշվետվություն՝ վարկային պատմության սուբյեկտի համաձայնության առկայության պայմանով:

5. Վարկային պատմության օգտատերն իր անդամ պետության լիազորված կազմակերպության (այսուհետ՝ հարցում կատարող լիազորված կազմակերպություն) հասցեով ուղարկում է վարկային պատմության սուբյեկտի մասին վարկային հաշվետվություն տրամադրելու վերաբերյալ հարցում (այսուհետ՝ հարցում):

6. Հարցում կատարող լիազորված կազմակերպությունը հարցում է ուղարկում մյուս անդամ պետության լիազորված կազմակերպության (այսուհետ՝ հարցում ստացող լիազորված կազմակերպություն) հասցեով: Հարցումը պետք է պարունակի վարկային պատմության սուբյեկտի նույնականացման տվյալները, վարկային պատմության սուբյեկտի համաձայնության առկայության, վարկային պատմության սուբյեկտի համաձայնության ձևակերպման ամսաթվի և հարցման նպատակի մասին տեղեկատվություն: Որպես հարցման նպատակ նշվում է վարկային հարաբերությունների ձևակերպման վերաբերյալ դիմումի ուսումնասիրությունը կամ ձևակերպված վարկային հարաբերությունների դիտանցումը:

7. Հարցում ստացող լիազորված կազմակերպությունը վարկային հաշվետվությունը կամ վարկային պատմության բացակայության մասին ծանուցումն

ուղարկում է հարցում կատարող լիազորված կազմակերպության հասցեով՝ հարցումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

8. Հարցում ստացող լիազորված կազմակերպությունը մերժում է հարցման կատարումն այն դեպքում, երբ այն կազմված է սույն համաձայնագրի դրույթների խախտմամբ:

9. Այն դեպքում, երբ հարցման կատարումը հնարավոր չէ, հարցում ստացող լիազորված կազմակերպությունն այդ մասին ծանուցում է հարցում կատարող լիազորված կազմակերպությանը (նշելով պատճառները)՝ հարցումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

10. Վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունները վիճարկելիս վարկային պատմության սուբյեկտն իրավունք ունի դիմում ներկայացնելու հարցում կատարող լիազորված կազմակերպություն կամ հարցում ստացող լիազորված կազմակերպություն:

Վարկային պատմության սուբյեկտի կողմից հարցում կատարող լիազորված կազմակերպությանը դիմելու դեպքում վերջինս վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունները վիճարկելու վերաբերյալ դիմումը ուղարկում է հարցում ստացող լիազորված կազմակերպության հասցեով՝ դիմումն ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվանից ոչ ուշ:

Այդպիսի վիճարկման կարգը սահմանվում է հարցում ստացող լիազորված կազմակերպության անդամ պետության օրենսդրությամբ:

11. Վարկային պատմության օգտատիրոջ կողմից վարկային հարաբերությունների ձևակերպման մասին պայմանագրի կնքումը մերժվելու դեպքում վարկային պատմության օգտատերը վարկային պատմության սուբյեկտի պահանջով նրան հնարավորություն է ընձեռում ծանոթանալու համապատասխան վարկային այն հաշվետվության բովանդակությանը, որը ստացվել է անդրսահմանային փոխանակման շրջանակներում (այդպիսի հաշվետվության առկայության դեպքում):



## Հոդված 5

1. Վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը կարող է ձևակերպվել այն անդամ պետության պետական լեզվով, որտեղ այն տրվել է: Հարցում ստացող լիազորված կազմակերպությունն իրավունք ունի պահանջելու վարկային պատմության սուբյեկտի համաձայնության հաստատված ռուսերեն թարգմանության ներկայացում:

2. Վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը պետք է պարունակի վարկային պատմության օգտատիրոջ և վարկային պատմության սուբյեկտի նույնականացման տվյալները, տրման նպատակը (վարկային հարաբերությունների ձևակերպում և (կամ) դրանց դիտանցում), ձևակերպման ամսաթիվը և վարկային պատմության սուբյեկտի ստորագրությունը:

3. Վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը ձևակերպվում է գրավոր կամ այլ եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ (էլեկտրոնային ստորագրությամբ) ստորագրված (հաստատված) էլեկտրոնային փաստաթղթի տեսքով)՝ հաշվի առնելով վարկային պատմության տվյալ սուբյեկտի նույնականացման ապահովման անհրաժեշտությունը՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան: Համաձայնությունը պետք է ստորագրված լինի վարկային պատմության սուբյեկտի կողմից անձամբ կամ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ սեփական ստորագրությանը հավասարեցված այլ եղանակով:

4. Վարկային պատմության սուբյեկտի՝ անդրսահմանային փոխանակման շրջանակներում ստացված համաձայնությունը վավեր է դրա տրման օրվանից 6 ամսվա ընթացքում: Այն դեպքում, երբ նշված ժամկետի ընթացքում կնքվել է վարկային հարաբերությունների ձևակերպման մասին պայմանագիր, վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը վավեր է նշված պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

5. Վարկային պատմության սուբյեկտի համաձայնության բնօրինակը

պահվում է վարկային պատմության օգտատիրոջ մոտ՝ այդ համաձայնության գործողության ժամկետն ավարտվելու օրվանից հետո առնվազն 3 տարի:

6. Անդրսահմանային փոխանակման շրջանակներում հարցում ստացող լիազորված կազմակերպությունն իրավունք ունի վարկային պատմության սուբյեկտի համաձայնության պահպանման ժամկետի ընթացքում հարցում կատարող լիազորված կազմակերպությունից պահանջելու վարկային պատմության սուբյեկտի համաձայնությունը կամ այդ համաձայնության առկայության մասին տեղեկատվություն՝ հարցում ստացող լիազորված կազմակերպության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

#### Հոդված 6

1. Լիազորված մարմինները, լիազորված կազմակերպություններն ու վարկային պատմության օգտատերերը պարտավոր են ապահովել այն տեղեկատվության պաշտպանությունը, որի մասով իրականացվում է անդրսահմանային փոխանակում՝ սույն համաձայնագրին, Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին և անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան դրա մշակման, պահպանման և փոխանցման ժամանակ:

2. Այն դեպքում, երբ փոփոխություններ են կատարվում այն տեղեկատվության պաշտպանության պայմաններն ու կարգը կարգավորող անդամ պետության նորմատիվ իրավական ակտերում, որի առնչությամբ իրականացվում է անդրսահմանային փոխանակումը, տվյալ անդամ պետության լիազորված մարմինն այդ փոփոխությունների մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին և Հանձնաժողովին՝ այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրացուցային օրվանից ոչ ուշ:

3. Սույն համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում սույն

համաձայնագրի գործողության ժամանակահատվածում անդրսահմանային փոխանակման ժամանակ ստացված տեղեկատվության մասով Կողմերը, իրենց պետությունների օրենսդրությանը համապատասխան, ձեռնարկում են դրա պաշտպանությանն ուղղված այնպիսի միջոցներ, որոնք համարժեք են այդ տեղեկատվությունը ստացած Կողմի պետությունում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների նկատմամբ կիրառվող միջոցներին, ինչպես նաև նշված տեղեկատվության պահպանման ամբողջ ժամանակահատվածում՝ սույն համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված նպատակներից տարբերվող նպատակներով դրա օգտագործումը թույլ չտալուն ուղղված միջոցներ:

#### Հոդված 7

Անդրսահմանային փոխանակման ժամանակ ստացված տեղեկատվությունը կարող է օգտագործվել բացառապես վարկային հարաբերությունների ձևակերպման և (կամ) ձևակերպված վարկային հարաբերությունների դիտանցման նպատակով:

#### Հոդված 8

Յուրաքանչյուր կողմ իր պետության օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում սույն համաձայնագրով նախատեսված՝ տեղեկատվության անդրսահմանային փոխանակման կարգի խախտումների կանխարգելման և կանխման, ինչպես նաև նման խախտումների ցանկացած դեպքի քննության համար: Խախտումը թույլ տված անձը պատասխանատվություն է կրում իր պետության օրենսդրությանը համապատասխան:

#### Հոդված 9

Սույն համաձայնագրի կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին համապատասխան:

#### Հոդված 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք դրա անբաժանելի մասն են կազմում և ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

#### Հոդված 11

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն անդամ պետությունների կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրը:

2. Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է և Միության իրավունքի մասն է կազմում:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2021 թվականի դեկտեմբերի «21»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**  
(Ստորագրություն)

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի կողմից՝**  
(Ստորագրություն)

**Բելառուսի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

(Ստորագրություն)

**Ղազախստանի Հանրապետության  
կառավարության կողմից՝**

(Ստորագրություն)

**Ղրղզական Հանրապետության  
նախարարների կաբինետի կողմից՝**

(Ստորագրություն)

**Ռուսաստանի Դաշնության  
կառավարության կողմից՝**

(Ստորագրություն)

**Բելառուսի Հանրապետության  
ազգային բանկի կողմից՝**

(Ստորագրություն)

**Ղազախստանի Հանրապետության  
ֆինանսական շուկայի կարգավորման  
և զարգացման հարցերով  
գործակալության կողմից՝**

(Ստորագրություն)

**Ղրղզական Հանրապետության  
ազգային բանկի կողմից՝**

(Ստորագրություն)

**Ռուսաստանի Դաշնության  
կենտրոնական բանկի կողմից՝**

(Ստորագրություն)

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021 թվականի դեկտեմբերի 21-ին քաղաք Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում վարկային պատմությունների կազմի մեջ մտնող տեղեկությունների փոխանակման կարգի մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**